

ԹԵՏԵՍԱՆԻ ՕՐԸ*)

(Ի ՕՄ - Կ Ի ՊՈՒՐ)

ԿԱՐԱԼԵՆԿՈՒ

(Մալառուսական հեքեաթ)

Կրակը հանգաւ, լուսնեակըն է բարձրանում
Ուրուականը ճարակում է անտառում:

(ԾԷՀՆԿՕ)

VII

Առաւօտեան վաղ, դեռ շաղն արօտի վրալ չի ցամաքել,
բայց ջաղացպանն արդէն հազուած, ճանապարհով դէպի գիւղ
է գնում: Հասնում է զեղի, իսկ ախտիղ արդէն մար-
դիկ իրար են խառնուած, կարծես մրջիւն լինեն.—«Էլ, նոր
բան զիտէք: Օղեվաճառի տեղաք քաղաքից նրա ոտնաման-
ներն են բերել միանու:

Ակդ առաւօտեան պէտք է նովուկամնկալում լինէիք,
որ լսէիք թէ ինչ էին խօսում, դատում. քիչ մարդու էլ մեղք
չառան:

Ետնկէլի ալրին, սմուսնու փոխարէն նրա ոտնաման-
ները ստանալով, բոլորովին շփոթուել, ոչ արածը զիտէր, ոչ
չարածը. Մանաւանդ որ Ետնկէլը խելք էր բանսցրել ու բո-
լոր փողն ու քամկով պարտատոմսերը հետը քաղաք էր տա-
րել, նա ինչ կ'կարծէր թէ ալդքան բազմութեան մէջ Զանչողն
իրեն է ջոկելու:

*) «Լուսալ» 1902 № 2.

—Միշտ ալդպէս է մարդս,—մտքով անդամ չի անցկացնում, թէ փորձանքը, ալ ալդ Զանչողի պէս, զլիսի վերևը պառակապառակ է անում,—զատողութիւն էին անում ամբոխի մէջի մարդիկ օգեանից հեռանալիս. իսկ ալդանդ ջահել ջնուդ կինն ու երեխերքը գետնին փոռուած մազերն էին փետրտում. Քայլց մի և նորն ժամանակ ամեն մէկն էլ մտածում էր.— երեխ իմ պարտատոմսս էլ անհետ կորած կլինիւ.

Էհ, աղիզն սսած, ամբոխի մէջ շատ քիչ մարդ զըտնուեցաւ, որ խիզճը միտքը բերէր— մեղք չնոք գործիլ, թէ որ ջնուդի կնոջը շահք չտանք էլ, գոնէ զլուխը տանք.... Բայց որ ճշմարիտն ասելու լինինք, ոչ ոք ոչ մի քոռ կոպէկ չտուեց նրան....

Զաւեց և ջաղացպանը. Էհ, ասենք ջաղացպանը իրեն հաշիւ չեր գցում:

Եանկէլի ալրին աղաչում էր, պաղատում, ոտներն ընկնում, մինչև անդամ երեխերանց ստիպնց ժողովրդի ոտքերն ընկնել, որ բարի գեղացիք գոնէ մանէթին տասը շահի տան, գոնէ քանան գրոշ տան, որպէս զի որբերը սովից չկոտորուին, մի կերպ քաղաք կարողանան զնալ. Շատ զթասիրտ մարդիկ մեղքան ան աստիճան, որ արցունքը բեխերի վրալով ցած էր զլորում, ոմանք էլ թեռվ բոթում էին կողքինին.

—Աստուածդ միտքդ բեր, դրացի, կարծեմ դուք մի բան պարտք էիք ջնուդին. Լաւ կանէիք տալիք.... Լս իմ Աստուած, պէտք է ինչքան էլ լինի տաք:

Բայց հարեսանը միան գլխարկի տակից զլուխն էր քուրում:

—Լս ինչու պիտի տամ, քանի որ ինքս իմ ձեռքովս իրեն ջնուդին բոլոր պարտքս մինչև վերջին կոպէկը տուել եմ քաղաք գնալուց առաջ, ի՞նչ է, մէկ էլ տամ. Աչ, դուք, հարեսան, ձեր բանն ուրիշ է....

—Ինչու իմ բանս ուրիշ կլինի, քանի որ ես էլ ուղիղ ալնպէս եմ արել, ինչպէս զուք. Եանկէլը քաղաք գնալուց առաջ եկաւ մօսս ու սկսաւ խնդրել—տուր, տուր—ես էլ հանեցի ու տուխ:

Զաղացպանը լսում էր ալս ամենը և սիրտը կսկծում— ալ քեզ մարդիկ: Մարդ եմ ասում համ. Ո՞ր ասես Աստուածց վախ չունին: Երեխ հէնց ինձ էլ,—մէկ ձեռքներն ընկնեմ,— մի և նորնն են անելու.... Է՛, պարոն գեղացիներ, ձեզ հետ

զործ բռնողը աչքը չորս պէտք է բանալ, - թէ չէ բանը բռւրդ է, լիմար է ալն մարդը, որ մատը ձեր բերանը կդնէ... Չէ, ինձանից արդ բանը չէք տեսնիլ—խելքս հացի հետ հո չմմ կերել, Քանից թողնեմ որ զնք ինձ օլինի բերէք, հազիր ես ձեզ օլինի բերեմ...:

Մենակ պառաւ Պրիսիան էր, որ ջնուզին բերեց տուաւ մի քսան հատ ձու և մ.կ էլ նոր գործած կտուի կէսը, և ալդ տուաւ չզիտեմ քանի կոսէկի տեղ, որ պարտք էր մնացել ջնուզին:

—Վեր առ, խեղճ, ներսղ եղիր մի քանի կոսէկ էլ մնաց, ալն էլ որ Աստուած տալ, կվճարեմ, Վերջին ունեցած էր, բերի:

—Ա՛յ քեղ խորամանկ պառաւ, —չարացաւ զարձեալ ջաղացպանը—Երէկ ինձ ոչինչ չտուեց, բայց ջնուզ կնկալ համար հո գտաւ Հօլ մարդիկ են հա: Հիմի ծերերի մէջ էլ հաւատարմութիւն չէ մնացել, Քրիստոնեալ մարդու չտուաւ, հանեց անիծուած ջնուզին տուաւ Սպասիր, պառաւ, ես քեղ վերջը ցոյց կտամ:...

Նանկէլի կինը ժողովեց իւր որբերին, կիսազնի ծախեց իւր ունիմ չունիմն ու մնացած օղին,—իսկ մնացածն էլ շատ բան չէր—Եանկէլն ուզում էր քաղաքից մի տակառ օղի բերէլ, մէկ էլ ասում էին որպէս թէ մ: երկու վեզրո էլ Խալը-կօն էր տակովն արել, —ու ոտով հեռացաւ զնաց Նովօ.Կամենկայից: Երբերը նրա եւենից...: Երկսին գրկած էր տանուս, երբորդը մօր փեշից բռնած քաշէ քաշ գնում էր ետեից, իսկ երկու մեծերն էլ իւար առաջկտրուկ անելով վաղում էին առջեից....

Եւ գեղացիք զարձեալ վզները քորեցին: Ով որ խեղճ ունէր, ինքն իրեն մտածում էր, և օնսէ ջնուզի փողի տեղաք խեղճերին կառքով դրկած լինէինք, գոնէ փոքր ինչ խղճերս մաքուր լլինէր: Բայց արի տես որ ամեն մէկն էլ վախենում էր՝—մի գուղէ ուրիշները զլխի ընկնեն, թէ երեի ջնուզի հետ դեռ իւր հաշխը մաքրած չէ: Խակ ջաղացպանը զարձեալ մտածում էր. ավնչ մարդիկ են: Թէ որ մի օր խոփս քարին առնի կամ ընկնեմ, անշուշտ ինձ էլ ուրախ պիտի լինին ալսպէս ձանապարհ ձղելու:

Ահա ալսպէս խեղճ ալրին իւր զաւակներով մի կերպ իրեն քաղաք ձղեց, և միախն Աստծուն է լսանի, թէ ինչ եղաւ ալսուհետեւ: Դուցէ մի տեղ իւր զաւակներով մի դործի

կպաւ, գուցէ և բոլորն էլ քաղցից կոտորուեցան, Ամեն բան կարող է լինել, Բայց, ասենք, ջուղիներն իւրաքիններին եւ բնի վրա չեն թողնում: Լաւ թէ վատ, մի կերպ հնար կտան ապրելու:

Սրանից լետով ժողովուրդն սկսաւ դատել, թէ ով պէտք է ախուժեան Նովո-Կամենկալում օղետուն պահի: Բանն այն է, որ թէպէտ Եսանիէլը վերցրել էր, թէպէտ նրա ալրին ու որբերը աշքի առաջից հռացել, զնս ցել էին, բայց օղետունը դարձեալ կանդնած էր բլրակի զլիսին, իսկ դրանն էլ սպիտակ ներիով նկարած մնում էր օղիի շափն ու ամանը. մի խօսքով ամեն բան իւր առաջուալ տեղն էր մնացել, Մինչեւ անգամ Խալրկօն բլրակի՝ վրա չստած իւր շիրուխն էր քաշում սպասելով, թէ ով էր լինելու իւր նոր աղան:

Ուղիղ է, մի երեկով, երբ ժողովուրդը դատարկ օղետան դրանը հաւաքուած դատողութիւն էր տալիս, թէ ով պէտք է իրենց օղետունն ու պանդոկը պահէ, — տէրտէրը մօտեցաւ նըրանց և, ամենքին խոնարհ զլուխ տալով, (ժողովուրդ ասածդ — մեծ բան է, մողք չէ եթէ մինչև իսկ տէրտէրը ժողովդի առաջ խոնարհութիւն ցոլց տալ), սկսաւ համոզել, թէ լաւ կլինէր համախօսական կազմէին ու օղետունը լաւիտեանս լաւիտենից փակէին. Տէրտէրն ինքը իւր ձեռքով թուղթը կըդրէր ու առաջնորդին էլ կիսրիր, Եւ այդ խիստ լաւ, իստ հաճելի և հասարակութեան էլ խիստ ձեռնտու բան կլինէր:

Ծեր մարդիկ, նրանց հետ էլ կանալք սկսան ասել, թէ տէրտէրի ասածը շատ ուղիղ է, բայց այդ բանը ջաղացպահին շատ ծուռ, մինչև անգամ վիրաւորական երեաց:

«Այս էլ քեզ տէրտէրս, — մտածեց նա, — ալս էլ քեզ բարեկամս: Բայց չէ, պատուելի հալր, սպասիր, զեռ կտեսնենք...»:

— Խօսք չկամ, շատ լաւ էք ասում, — կեղծաւորութեամբ ասաց նա, — այդ թուղթը շատ ձեռնտու բան է... միայն չղիտեմ ձեզ թէ հասարակութեան: Դուք ինքներդ — սրտներդ չցաւի՛ — օղին միշտ քաղաքիցն էք բերել տալիս. ի հարկէ ձեզ օղետուն էլ հարկաւոր չէ: Այս էլ ձեզ համար ձեռնտու է, որ առաջնորդը կարդալ թուղթն ու ձեզ կդովի:

Ամրող ժողովուրդը սկսաւ հաւանութիւն տալ, աղմուկ հանել, անպէս որ տէրտէրս բարկութիւնից թքեց, լարդէ զլիսարկը զլիսին քաշեց ու օղետանից հեռանալով զնաց իւր-

ճամբան, հէնց իմանաս զրա համար եկած չլինէր, հապա ե-
րեկոյեան զրուանքի դուրս եկած լինէր:

Ե՛ս, ինչ երկար բարակ գլուխ ցաւացնեմ. Կարծեմ ինք-
ներդ էլ հասկացաք, որ ջաղացպանն ինքն էր ուզում ջուղի
տեղ օգնուուն պահել, իսկ մի անզամ որ ալգ միտքն ունէր,
ինչպէս հարկն է մի լաւ խօսեց հասարակութեան հետ, ում
որ պէտքն էր օղիով լարգեց, զեմստվալին զատարանում
իւսրաւնիկին բանը լաւ հասկացրեց, զաւառական դատարա-
նում - գրադրի, լիտոյ գանձականի հետ տեսնուեցաւ, և վեր-
ջապէս նաև շինական ոստիկանապետին ու խմբչքների վե-
րատեսայն շահեց.

Ավո ամենից լսող ջաղացպանը գիւղ դառնալով, զնաց
օղեառն. իսկ այնաեղ խարկօն բլրակի վրայ նստած իւր շի-
ռուխն էր քաշում. Ջաղացպանը հէնց զլիով որ չարեց. Խարկ-
օն - թէպէտ և հսպարտ մարդ էր - իսկոյն վեր թռաւ տեղից
ու ջաղացպանի մօտ վազեց,

— Հը՛, ինչ կմսես, — հարցրեց ջաղացպանը
— Ես ինչ պիտի ասեմ. Գուցէ դուք քուք քան ունիք ասելու.
— Հէնց բանն էլ ալդ է, որ ունիմ է.

Ե՞լ ջաղացպանին յեղուակոխ չէր անում, հապա զվար-
կը երկու ձեռքի մէջ բանած արորում էր և, Ֆիլիպովի տած-
ները լսելուց իւսոյ, խելօք-խելօք պատասխանեց.

— Մառադ եմ. պատրաստ եմ աշխատելու ձեր լարդու-
թեան համար...»

Եւ ջաղացպանը սկսաւ Նովոկամենկալում ւանկէլից էլ
լաւ միքլաւնութիւն անել, և իւր մանէթնւրը ուրիշների
մօտ արածելու զրկել, և հէնց որ ժամանակը կզար - իսկոյն
նրանց իրենց պարուզներով կհաւաքէր իւր գանձարանը. Եւ
ալ ևս Նովոկամենկալում նրան ոչ ոք խանգարող չկար.

Բայց որ մարդիկ նրա երեսից շատ անզամ դառն ար-
տասուք են թափել, — Ե՛ս, ալդ էլ սուտ չէ, իսկ ուղիղ բանը
թագցնել կարելի չէ, Ուղիղ որ շման են լաց եղել - գուցէ ոչ
պակաս, քան Նանկէլի երեսից են լացել, գուցէ և նրանցից
աւելի, — հաստատ չեմ կարող ասել. Ո՛վ է մարդկալին վիշտը
չափել, ո՞լ է մարդկանց արցունքի հաշիւը պահել...»

Ե՛ս, ոչ չափողը կալ, ոչ էլ հաշուողը. ասած է, — շունը
չնից, երկուսը մէկ անից, չզիտեմ ո՞լ ինչպէս, բայց ես կար-
ծում եմ, որ ալդ ուղիղ է...»

VIII

Ճիշտն ասած, ամենեին չեխ ուզիլ բարեկամիս համար այսպիսի բաներ պատմել, բայց ինչ արած՝ մի անգամ որ սկսել եմ, պէտք է վերջացնում, տաղը որ ասես, պէտք է բառերն էլ ասել... Մանաւանդ որ, երբ ինքը ջաղացպանը ու չինչ չի թաքցնում, ևս ինչ ունիմ թագցնելու...»

Բանն այն է, որ ծերունի Սանկելին լոկ մարդկանց փողն էր հարկաւոր. Հենց որ ականջովն ընկնէր, թէ մէկի ջերում մի-երկու ուորլի կալ, իսկոյն սիրտը որդ կընկնէր, կվրձէր, ու իսկոյն կսկսէր մի ախպիսի բան մտածել, որ արդ ուորլին իւր ջերը մտնի. Որ լաջողուէր—նրա ու Սուրալի ուրախութեան էլ չափ չկար.

Իսկ ջաղացպանի համար ալդ քիչ էր. Սանկելը ինքն էր ամենքի առաջ մինչև զետին խոնարհում, այն ինչ ջաղացպանը ուրիշներին էր. իւր առաջ ծոռում, խոնարհեցնում, ու կոռելի (հնդկանաւ) նման էլ գլուխը հպարտ-հպարտ վեր բարձրացնում. Սանկէլն, ասենք, ստանաւօլի մօտ որ գնար, ետեսի ղոնով. Կմտնէր ու դողդողալով կանգնած կմնար զրանը, իսկ ջաղացպանն ուզդակի մեծ դանով ներս կմտնէր, հէնց գիտենաւ իւր հօր տունը լինէր. Պատահեց, որ մէկը հարբած-խելօք մեր Սանկէլին մի լաւ վլակոթին հասցրեց, խեղճը շատ էլ չէր նեղանում— մի քիչ կլոնծկնծար ու կդադարէր, շատ-շատ վերջը մի քանի շանի ջարամալ ուզէր. Իսկ ջաղացպանը հէնց ինքն էր շատերի մազերից բռնում, ալնպէս որ շատ անդամ խեղճի մալը նրա ծեռքը կմնար, իսկ աչքերից, ոնց որ դարբնոցում կռանի տակից, կտիճեր կթուչէին.... Հապահ, հէնց բանն էլ ալդ էր. է-ջաղացպանին համ պատիւ պիտի տալիք, համ փողգու ևւ ինչ պահեմ, և տալիս էին. Մարդիկ պատկերների առաջ խոնարհում, երկրպագութիւն են անում, իսկ իմ բարեկամիս առաջ ևս աւելի էին խոնարհում. Բայց նա էլի դժգոհ էր. Ցիսուր, տրաում ման կդար սենեակի մէջ ու կմտմտար. կարծես սիրտը շուն կրծելիս լինէր. «Զէ», ոնց որ ախպէս չէ շինած աշխարհս,—չէ, ախպէս ոչ չէ, ֆող էլ ունենաս, էլի ալն չէ, սրտիդ ուզածին պէս չես ուրախանում».

Մի անգամ Խալրկօն նրան հարցնում է.

— Ի՞նչ էք, աղա, աղպէս տխուր-տրտում ման գալիք համան գալիք, հէնց իմանաք թրջած աքլար լինիք էլ ինչ չերդ է պակաս.

— Գուցէ որ պսակուէի, մի քիչ սիրաս բացուէր, ուրանանալի:

— Էլ ինչ էք սպասում, պսակուեցէք էլի:

— Հէնց բանն էլ ալդ է է: Ի՞նչպէս պսակուես, երբ որ կողմից մտիկ ես աալիս, բանը զլուխ չի գալիս: Գեղ ճիշդն, ասեմք,—երբ որ դեռ ջաղացպան չէի, հապա բանուար, գուցէ իմացած էլ լինես, ես ակսոնզ սիրում էի Գալիալին, ալրի կնոջ աղջկան.... Թէ որ աղաս խեղդուած չլինէր, կարելի է արդէն նրան առած էլ լինի: Ալժմ դու դատիր — հիմի ինչ իմ թան է Գալիան:

— Ի՞նչ խօսք, ալժմ ձեզ սաղ կդատ միայն հարուստ Մակողոնի աղջիկը, Մոտրիան:

— Հա, ինքս էլ տեսնում եմ, ուրիշներն էլ հէնց մի ձալն ալդ են ասում, թէ իմ հարստութեանս նալած Մակողոնները խակ որ սաղ կդան ինձ.... Բայց գա էլ... շատ զըզ-մելի է ալդ Մոտրիան: Սաղ օրը ահագին խոսի դէզի նսան: Նստած հա կուտ է ուտում: Հէնց որ աչքս վրան չեմ ձգնում, կարծես մէկը քթիցս բաներմ է ու երեսս միւս կողմ շուռ տալիս.... Ա՛յ, ինչ եմ ասնում, Գալիան ուրիշ բան էս.... Ճիշտ որ, աշխարքիս բաներն ախնպէս չեն դառնում, ինչպէս որ պէտքն էր նւզում ես մէկին սիրես—բայց արի տես, որ փող ուրիշն ունի.... Գիտեմ, պիտի ցամաքեմ, չոփ դառնամ.... Արար աշխարք աչքիցս դուրս է եկել:

Զինուարը բերանից չի բուխը հանեց, թքեց կողքի, ու ասաց:

— Վամտ բան է: Ոչ մի մարդ կարող չէ ձեր դարդին դարման անել, բայց որ ինձ լսէք, չէք փոշմանիլ: Գուցէ դեռ ինձ փեշէշ անէք ալն կօշիկը, որ Օպանասից դրաւ է մնացել, հը....

— Մի ալդպիսի բանի համար աչքիս կօշիկ կերնալ: բայց ճարը գտնել ես արդեօք....

Նւ ճշմարիտ, անպիտան զինուարը—գրողը նրան տանի—ճարը գտել էր. մի ախնպիսի բան էր զտել, որ եթէ ամեն բան նրա ասածին պէս լինէր, ու մի քիչ էլ վաղ եղած լի-

նէր, — զուցէ ալժմս արդէն մին աշխարքում ստատաները մեր ջաղացանին ջրկիր դարձրած լինէին, ու ես էլ ձեղ այս պատմութիւնը էի պատկիւլ...

— Դէ լաւ, յսեցէք — ասում է նա, — Ուրեմն զուք երեք հոգի էք — մի տղամարդ ու երկու աղջիկ։ Բայց, ի հարկէ, կարկի բան չէ, որ մի մարդ երկու կնիկ առնի, որովհետեւ թուրք ևս չէք։

«Գրողը տանէ, ինչպէս ուզիդ է դատում, — մտածեց ջաղացանը։ Յետու տեսնենք»։

— Լաւ, Քանի որ դուք հարուստ մարդ էք ու Մոտրիան էլ հարուստ հարսնացու, — ալստեղ փոքր տղան էլ ձեղ կասէ, թէ ումը պէտք է առնէք դուք, Ծերունի Մակողոնին խնամի դրկեցէք։

— Ճիշդ ևս ասում, Բայց ես ալդ առանց քու ասելուդ էլ գիտէի... Հապա Գալիքն։

— Իսկ զուք մինչև վերջը լսեցիք։ Կամ զուցէ արդէն ինքներդ էլ զիտէք, թէ ինչ էի ուզում ասել...»

— Դէ լաւ, լաւ, մի նեղանալ։

— Դուք անմեղ հրեշտակին էլ կնեղացնէք, Ես ալն մարդք չեմ, որ մի բան սկսեմ ու չվերջացնեմ։ Մի շտապէք, Գալիքի մասին էլ պիտի ասեմ։ Նա ձեղ սիրում էր,

— Ինչ որ ուզիդ է — ուզիդ է։

— Իսկ զուք այն ժամանակը, որ նա ձեղ սիրում էր, ինչ էիք։

— Ջաղացքի բանուոր։

— Դէ այժմ դարձեալ մանր երեխան անդամ կհասկանալ, — թէ որ մի աղջիկ ջաղացպանի բանուորին է սիրել, ջաղացպանի բանուորի էլ կին պիտի լինի։

— Ես հո ջաղացպանի բանուոր չեմ։

— Ի՞նչ ամսենք որ չէք։ Միթէ ջաղացում բանուոր չունիք...»

— Գաւրիլօն... Ե-է-հէ, տես ինչ է մտածել... Դէ որ ալդպէս է, թող նա էլ քեզ կօշիկ տալ ալդ խելօք բանի համար։ Քեզ ալսքանս ասեմ, որ ոչ նա, ոչ էլ նրա եօթը պորտը ալդ բանը չեն տեսնիլ։ Ես լինիմ ու համբերեմ։ Կդնամ, նրա զլուխը կջարդեմ։

— Ա՛յ քեզ տաք մարդ։ տեղն ու տեղը կրակ է... Ես բոլորովին ուրիշ բան էի ուզում ասել, իսկ զուք տաքացել կրակ էք կտրել։

— Ուրիշ բնչ ունիս ասելու, եթէ ևս ալդ ասածդ չեմ
հաւանում,

— Առաջ մէկ լսնցէք:

Խալրկօն վերտունը հանեց բերանից, մի ուշը կկոցած
ջաղացպանի երեսը նախցաւ, ու լեզուով մի սինպէս չլմփաց-
րեց, որ ջաղացպանի քէֆն եկաւ...

— Խակ դուք, նրան, աղքատ էլ որ լինի, դարձեալ սի-
րում էք...

— Ի՞նչ խօսք, ի հարկէ սիրում եմ...

— Դէ հիմի էլ, երբ բանուորի կինը դառնալ, որքան
սրտներդ ուզէ, դարձեալ կարող էք սիրել նրան: Սա իմ ա-
սելիքս վերջացրի, — երեքդ էլ կապրէք միւնուն ջաղացքի
մէջ, իսկ չորրորդը, պակաս Գաւրիլոն հաշիւ չէ:... Հը, հիմի
հասկացաք, թէ ինչ եմ տալիս ձեզ, գինի թէ քացախ: Զէ,
Խալրկօն զլսին չեն թակել, հապա մին տեղին, որ վակել
է, և զրա համար էլ նա խելօք մարդ է գուրս եկել, — զիտէ
թէ միջուկն ում կհասնի, կճեղը-ում, և նոր կօշիկներն էլ
մամ...

— Հասկա եթէ բանը զլուխ չգալ:

— Ինչու չպիտի զլուխ դալ որ:

— Ես բնչ զիտեմ, հազար ու մի պատճառ կարող է լի-
նել: Վէնց ծերունի Մակոզոնը կարող է աղջիկը չտալ:

— Հա: Թէ որ ևս ինքս հետը խօսած չլինէի, ուրիշ
բան էր...

— Յետնէ:

— Յետու բնչ պիտի լինի: Գաղաքից օղի էի բերում,
իսկ նա — քաղաք էր զնում: Դէսից, դէնից խօսեցինք, ու ես
ասացի: «ահա ձեզ համար փեսաւ: — մեր ջաղացպանը»:

՝ Նմ ինչ առաց:

— «Մտքովն անգամ թող չանցկացնէ, ասում է: Ի՞նչ
կարողութեան տէր է, որ դրան աղջիկ տամ:»

— Խակ դու բնչ ասացիր:

— Ես էլ ասացի: — ինչի, բնչ կալ որ. երեկ դեռ չգիտէք,
որ ահա շուտով մէկ տարի կլինի, որ մեր ջնուդին սատանան
չանչել, տարել է:

«Հա, որ աղպէս է, — ասում է, — ալդ ուրիշ բան՝ — որ
ջնուդը գիւղում չէ, ի հարկէ ջաղացպանն էլ ալժմ մարդու
կարդ է...»:

— Դէ լմւ, ասենք Մակոդոնը համաձայնեց, Տեսնենք
դեռ Գալիան կուզի բանուորին գնալ....
— Հը՛մ, որ մօրն ու աղջկան խրճից վանդեն, ուրախ
կլինի ջաղացքումն էլ ապրելու.
— Ալդ, ասենք, աղպէս է...

IX

Զաղացպանը իւր ջանը քորեց, իսկ ալս բանը, որ ես
ձեղ պատմում եմ, ահա արդէն մօտ մէկ տարի կլինէր, որ
սկսուել էր Զաղացպանը զեռ իւր չորս կողմը չէր կարողացել
մտիկ տալ, որ արդէն Ֆիլիպովիշան էլ, մեծ պասն էլ, զա-
րունն ու ամառն էլ անցել էին, զնացել, և ահա զարձեալ
մեր Զաղացպանը կանգնել է օղետան շնմքի մօտ, իսկ նրա
կողքին—վարձուրը մէջքը դրան կողքին դէմ տուած, Մտիկ
է տալիս, ու Բնչ տեսնէ լաւ, — տեսնում է, որ լուսինը ինչ-
պէս որ մի տարի առաջ, նոյն դէս և ալժմ պահառ փալում
է երկնքի երեսին, միննոյն կերպով էլ գետակն է շողողում,
և փողոցը նոյնպէս սպիտակ է, և նոյնպիսի սև սառւերը ջա-
ղացպանի կողքով վազում է արծաթափալլ գետնի վրալով,
և մի բան ընկաւ ջաղացպանի միտքը.

— Լսիր, բան եմ ասում, Խալրկօ,
— Ի՞նչ կար,
— Ալսօր Բնչ օր է,
— Երկուշաբթիւ,
— Իսկ ալն ժամանակ լիշտում ես, շաբաթ օր էր,
— Տարուալ մէջ շաբաթ օրեր շատ....
— Ալն ժամանակ, մի տարի առաջ, դատաստանի օրը,
— Հը՛, ադ էք ասում. Ալն, շաբաթ օր էր,
— Իսկ ալժմ երբ է նրանց դատաստանի օրը,
— Ի՞նչը, ես էլ չդիտեմ երբ է, Մօտակալքում էլ ջնուդ
չկալ, որ գիտենամ.
— Հապա մի երկնքին նալիր, ինչպէս պարզ է, իսկ և
իսկ ալն օրուալ նման....

Եւ ջաղացպանը վախեցած ջնուդի խրճիցի պատուհանին
մտիկ տուաւ, թէ մի գուցէ զարձեալ ջնուդի տղաքը նստած,
տղալիս, զլուխները շարժելիս ու աղօթելիս լինին իրենց

Հօր մասին, որին Զանչողը դաշտերի ու ձորերի վրայով քաշ
է տալիս...»

Սակայն չէ. Այդ ամենն արդէն անցած գնացած բան է:
Երեկ Սանկէլի ոսկորն անգամ մնացած չի լինի, նրա որքե-
րը շաղ են ընկել երկրիս հեռաւոր կողմարը, իսկ խրճիթն էլ
մուշտն է, կարծես գերեզման լինի...» Եւ ջաղացպանի հոգու
տունն էլ այնպէս խաւար էր, ինչպէս ալդ ջնուդի խրճիթը:
«Այն ժամանակ ջնուդին չաղատեցի, աղոցը որբացրի, — մտա-
ծեց նա ինքն իրան, — ալժմ էլ թալաք եմ սարքում ալրի կնոջ
աղջկանը...»:

— Հը՞, բանը գլուխ կզակ կասես, — հարցրեց նա Խալրկօնին:

— Ինչու չպիտի գլուխ գալի Հա, կան մարդիկ, որ իրենց
բաղդին քացով են տալիս, գուցէ գուք դրանցից էք...»

— Ասենք ես դրանցից չեմ, բայց էլի... Դէ մես բարով:

— Երթաք բարով!»

Ջաղացպանը ըլրակից ցած իջաւ, իսկ Խալրկօն դարձեալ
նրա ետևից շվշվացրեց: Թէս այն անգամուալ նման մի այնքան էլ
անպատիւ կերպով շվշվացրեցնա, բայց և այնպէս ջաղացպանը
խիստ առնուեցաւ:

— Կ'ո՞չ ես շվշվացնում, հառամզադա, — ասաց նա ետեը
դառնալով:

— Ա՛լ քեզ բան, սրա պատճառով մարդ չպէտք է էլ
շվշվացնէ, — վիրաւորուեցաւ Խալրկօն: — Ես կապիտանի մօտ էլ
ծառակելիս դարձեալ շվշվացնում էի, իսկ ձեզ մօտ կարելի չէ:
«Ուղիղ է ասում, — մտածեց ջաղացպանը, — և ինչու չպի-
տի շվշվացնէ որ. Բայց զարմանք բան — ալս ինչիցն է ամեն
բան էլ այնպէս պատահում, ոնց որ այն երեկոր...»:

Եւ նա հեռացաւ ըլրակից, իսկ Խալրկօն, թէպէտ մի քիչ
ցած ձախով, դարձեալ շվշվացրեց...» Անցաւ ջաղացպանը բա-
լուտի պարտէզների մօտով, տեսնի: — Էնց իմանաս դարձեալ
երկու խոշոր թռչուն դուրս պրծան արօտի միջից, և դարձեալ
ստուերի մէջ սպիտակին է տալիս բարձր մորթէ գլխարկն ու
աղջկալ նիշած շապիկը, և մէկն արնպէս պինդ-պինդ պաշպէ-
ւում է, որ թփերի մէջ արձագանդ է տալիս.... Թիհ, գրողը
տանէ: Այս անգամ ջաղացպանս ալլ ևս սիրտ չարաւ անի-
ծուած երիտասարդին կշտամբելու, — վախենումէր, թէ մի գուցէ
անցեալ տարուալ նման պատասխան ստանալ...» Եւ մեր Ֆիլիպպը
գանդաղ քալերով մօտեցաւ ալրի կնոջ ցանկապատին:

Անտ և խրճիկը, որ կարծես լուսնի լուսով վառուելիս
լինէր, և պատուհանը, որ աչքախփիկ էր արել, և բարձր սօ-
սիները, որ լող էին տալիս լուսնի լուսի մէջ... Զաղացպանը
փոքր ինչ կանգ առաւ ցանկապատի առաջ, գլուխը քորեց և
դարձեալ ոտքը ցանկապատի վրալով զցեց միւս կողմը.

—Թիս-թիսկ.

«Օ՛Փ! Էլի այն անդամուալ նման շան հալում պիտի լի-
նիմ, գուցէ և աւելի վաթը լինի,—մտածեց Զաղացպանը:—
Ախոր արդ անիծուած Խալրկօն ի բ անիծուած լեզութ շնո-
ւաւ նկարագրեց բանն է...: Հիմի որ միտք ևմ անում, չէ,
չէնց իմանաս ակն չէ... բան չի դուրս դալիս ասածից: Ե՞ւ,
թող ինչ լինելու է լինի—և նա նորից պատուհանը թըլ-
կացրեց:

Անա պատուհանից երեսց Գալիսալի շարմաղ երեսն ու
սեռակ աչքերը:

—Մալրիկ ջան, մալրիկ,—շշնջաց նա:—Էլի անիծուած
Զաղացպանն է եկել, պատուհանի առաջ ցցուել ու ապակին
թակում:

«Ե՞ն, էլ ալս անգամ դորս չի վազել, ճտովս ընկնիւ:
թէկուղ սխալմամբ էլ չի համբուրիլ, ինչպէս ակն անդամն էր»
—մտածեց Զաղացպանը և չսխալուեցաւ՝ աղջկը դուրս ե-
կաւ խրճից, ևսուու կանգնեց ու ձեռները սպիտակ կրծքին-
խաչեց:

—Ի՞նչ ես էլի եկել պատուհանը թակում:

Ա՛յս, ծանր է ալդպիսի սատն խօսքեր լսել մի աղջկա-
նից, որին առաջ ջերմ սրտով սիրել ես...: Զաղացպանս մէկ-
ուզում էր աղջկանը դիկել ու ցոլց տալ, թէ ինչո՞ւ էր եկել,
և մինչն անգամ, ուղիղն ասած, կողքի կողքի մօտենում էլ էր
Գալիսալին, մէկ էլ միտք արաւ, որ պէտք էր առաջ Խալրկօի-
ասածներն ասել, և խօսեց:

—Ի՞նչի չպէտք է թակեմ, քանի որ արդէն անքան էք-
ինձ պարտք մնացել, որ տակիցը դուրս գալու ճար չունիք....
Զեր խրճին էլ ապագան չարժէ:

—Ա՞նասատուած, թէ գիտես որ պարտքի տակից դուրս-
չպիտի գանք, էլ առ ես զիշերավ պատուհան թակում: Ուս-
ուաւ մօրս զերեզման պիտի իշեցնեաւ:

—Ո՞վ է նրան զերեղման իջեցնում, Գալիսաւ Գո ձեռին
չէ: որ ուզես, կարող եմ մօրդ ձերութիւնը միսիթարել:

— Անուտ ես ասում:

— Զէ, սուտ չեմ ասում: Ա՛խ, Գալիա, Գալիա, կեանքս կեանք չէ առանց քու սիրուդ...»

— Հա, շան նման հաջա...: Բաս այն ով է ուզում Մա- կազոնին խնամի ուղարկի:

— Ուզում եմ թէ չեմ ուզում, բայց ես, Աստուած վկալ: Ճիշդն եմ ասում, առանց քեզ հալ ու մաշ եմ լինում...: Բայց թէ հիմի ինչ եմ մտածում—այս բոպէիս ամեն բան կարգով կպատմեմ, իսկ դու, թէ որ խելօք աղջիկ ես, մի լաւ ականջ կդնես: Միայն տես, պայման եմ դնում—ինչ ասելու ես ասա, բայց բանը փալտի չհասնի, թէ չէ կնեղանամ հա:

— Խելք չհասնելու բաներ ես ասում,— ասաց Գալիան: Ճեռները ծալելով.— Դէ լաւ, ես մտիկ կանեմ, միայն տես, թէ էլի լիմար-լիմար դուրս ես տալու, կփոշմանես հա...:

— Ե՛, չէ. լիմար բան չէ ասելուու..: Բանն այն է, որ դու... ինչպէս էր ասել Խալրկօն...

— Խալրկօն, Խարկօն ինչ գործ ունի ալստեղ:

— Ե՛ն, սուս կաց, թէ չէ չեմ կարող մի կարգին բան ասել...: Պատասխանիր— դու սիրում էիր ինձ:

— Որ սիրելիս չինէի, քո արդ զզուելի մռութղ կպա- չէի հա...:

— Ես ինչ էի այն ժամանակ— ջաղացպանի բանուոր, չՔ...

— Հա, Սև ղառնար էն օրը, ո՞ֆ ջաղացպան ղարձար:

— Եէ՛: աւելորդ բաներ մի ասիլ, թէ չէ ասելիքս կմո- ռանամ...: Ուրեմն դուրս է գալիս, որ դու բանուորին էիր սիրում, ուրեմն ե բանուորի հետ էլ պիտի պսակուես ու ջա- զացում ապրես: Իսկ ես ինչպէս առաջ էի սիրում, ալնպէս: Էլ արդ ժամանակ կսիրեմ քեզ, թէկուզ տասը Մոտրիա առնեմ:

Գալիան մինչեւ անդամ աչքերը տրորեց— չլինի թէ, մտածում էր, երաղում լինի:

— Արդ ինչ ես դուրս տալիս, ալ մարդ, կամ ես եմ բո- լորսին խելքս թռցրել, կամ թէ չէ՝ քու մի տախտակդ է պակաս: Ալդ ինչպէս կարող եմ բանուորի հետ պսակուել, քա- նի որ դու ամժմ ջաղացպան ես: Եւ ինչպէս կարող ես ինձ: առնել, երբ Մոտրիալին խնամի ես ուղարկելու, հը...: Ալդ ինչ ես դուքս տալիս, ալ մարդ, ձախ ձեռովդ մի երեսդ խա- չակնքիր:

— Ակ քեզ խօսք: Միթէ ալլ ես բանուոր չկալ ջաղացում:

Հապակ Գաւրիլօն... բանուոր չք նա, ձիշդ է, մի փոքր խելքից պակաս է, բայց ալդ բանը, շիտակն ասեմ, աւելի ձեռնոտու է մեզ համար.

Աղջիկը միան ալժմս հասկացաւ, թէ ինչ էր ուզում հասկացնել ջաղացպանը: Նա լանկարծ ձեռքերն իրար խփեց ու աղաղակեց.

— Վակ մալրիկ, մալրիկ ջան, սա ինչ բան ասաց, Նա թրքացել, երկու կին է ուզում առնել, Շուտ արա, մալրիկ ջան, փէտը դուրս բեր տնից, իսկ առ ալժմ ես իմ ձեռներովս կտևնեմ նրա դատաստանը....

Աւ սկսաւ աղջիկը ջաղացպանի վրալ գնալ, իսկ ջաղացպանս լետ-լետ էր փախչում...: Հասաւ չափարին, ոտը գցեց վրան ու ասաց.

— Հը՛, ալդաբս, հա, օձի ծնունդ, Դէ, դու էլ, մալրիկ էլ կորէք, դուրս գնացէք ալս խրճթից. Հէնց վաղն և եթ պարտքի տեղ կիւլեմ ձեռներիցդ, Կորիր:

Իսկ աղջիկը պատասխանեց.

— Դու էլ հէնց ալս բոպէիս դուրս կորիր պարտիղից, քանի որ դեռ ես եմ պարտիղի տէրը. Թէ չէ, եղունգներով աչքդ կփորեմ ու էն օրը կզցեմ, որ Մոտրիադ անգամ չկարողանալ ճանաչել, — չ թէ երկու հոգի սիրել, հապա նոյն իսկ մէկն էլ չուղենալ վրադ նալել.

Դէ գնա ու հետը խօսիր: Ջաղացպանը թքեց, շտապով ցանկապատից վէր թռաւ ու զալրացած, դուրս եկաւ գեղից. Երբ որ հասաւ ճանապարհի բարձր տեղին, որտեղից արդէն լսում էր, թէ ինչպէս ջուրը խոխոջում է նաւերի մէջ, մինչև անգամ ետեր դարձաւ ու բոռնցքով սպառնական շարժում արեց....

Աւ հէնց ալդ միջոցին լսուեց — դո՞ն, դո՞ն...

Դարձեալ գիւղի զանգակատանը ժամն ուղիղ կէս գիշեր խփեց....

X

Ջաղացպանը մօտեցաւ իւր ջաղացքին, իսկ ջաղացքն ամբողջապէս թաղուած է ցողի մէջ, և լուսինը լուսաւորում է, և անտառը կեցած փալլիլում, և բուն — ալդ անիծեալ թռչունը — ցատկում, եղէգնուան է ընկնում, չէ քնում, կար-

Ֆես մէկին սպասելիս լինի, կարծես մէկին ճահճուտից դուրս կանչելիս լինի...»

Զաղացպան Փիլիպպի վրայ նեղութիւն եկաւ:

— ՀԵ՛, Գաւթիլո, — կանչեց նա Զաղացի կողմը դառնալով:

— Բու-հու, բու-հու, — ձախ տուաւ ճահճուտից բուն, իսկ

Զաղացքում որ ասես ձախ-ծպտուն չկար:

«Ա՛յս, անիծուած տղակ, Էլի աղջկերանց մօտ է վաղ տուել...» — մոածեց Զաղացպանը և կարծես սիրով չէր տալիս, որ գատարկ Զաղացը վերադառնար: Թէպէտ արդէն սովորել էր, բայց դարձեալ ժամանակ-ժամանակ լիշում էր, որ Զաղացի լատակի տակի, ցցերի արանքներում մենակ ձկներ ու օձեր չեն որ լող են տալիս մութ ջրի մէջ...»

Նա զարձաւ, քաղաքի կողմը նալեցաւ Խաղաղ, պալծառ գիշեր էր, մէզը հազիւ նկատելի կերպով ծուխի նման կանգնած էր գետակի վրայ, որը հոսում, գնում էր անտառի ետեղ, բայց լուսաւոր աղջամուղի միջից չէր երևում...» Խակ երկնքում որ ասես ամպ չկար...»

Զաղացպանը ետեղ դարձաւ և զարմացաւ, թէ որտեղից էր ալս փոքրիկ ջրի մէջ ալսքան խորութիւն—թէ լուսնի համար, թէ սատղերի համար և թէ բոլոր կապուտ երկնքի համար...»

Աէկ էլ տեսաւ որ ջրի մէջ, աստղերի վրալով մի փոքրիկ մոծակ է թռչում...» Մի լաւ մտիկ տուաւ, տեսաւ—մոծակը մեծացաւ, ճանճի չափ դարձաւ, լետով ճնճղուկի, ադռաւի, իսկ վերջն էլ մի մեծ թռչում:

— Յիսուս, Քրիստոս, չարը խափանես, բարին կատարես, — ասաց Զաղացպանն ու աչքերը վեր բարձրացնելով տեսաւ, որ ալդ ջրի մէջ չէր, հապա օդի մէջ մ', բան թռչելով ուղիղ դէպի Զաղացն էր զալիս.

— Տէրն ինքը փրկի, Երեկի ալս դարձեալ Զանչողն է որսի համար, քսղաք գնում, Դուռ մի ալս անհաւատին տես, որքան ուշացել է ալս անգամ—արդէն կէս գիշերը խփել է, իսկ նա զեռ նոր է ճամբալ ընկնում...»

Նա ալսպէս, գլուխը վերս բարձրացրած, մնացել էր կանգնած, իսկ օդի մէջ, արծուի նման, պտուտ-պտուտ անելով սլանում էր ամպն ու ցած դալիս. իսկ ալդ ամպի միջից մի բզզոց էր լաւում... ոնց որ մեղուապարը, որ վեթակից գուրս զալով պարտիղի վրալով է թռչում...»

—Հը՛, զինի դարձեալ իմ ամբարտակի վրալ է ուզում հանգստանալ. Աս էլ Բնչ նոր բան է սովորել աս. Սպասիր, եկող տարի մի խաչ տնկեմ, տեսնենք ալն ժամանակ էլ կը. դաշ. ամբարտակի հո քարվանսարալ չէ, որ դար ու ճանապարհին հանգստանալ.... Ընը՛, հապա ալս ինչ ձայն է, հէնց իմանաս երեխերանց բաց թողած թրթուի ձայն լինի, ինչպէս երեռում է դարձեալ պէտք պիտի լինի թփի քամակին թաք կենալ ու դիտել.

Հազիւ հասել էր թփերի ետեր, վերև նալեցաւ և քիչ էր մնում վախից կանչէր.... Ի՞նչ տեսնէ լաւ—տեսնում է, որ հիւրը մօտեցել է ջաղացի կտրին և ձեռին բռնել է.... զրադ կդամ, որ մտքներովդդ անդամ չէք կարող անցկացնել, թէ Բնչ է սատանան իւր չանչերի մէջ բռնել....

Զհուդ ևանկէլին. Այս, հէնց ալն Եանկէլին, որ մի տարի առաջ սատանան քաշ էր տուել, հետը սարել, ալժմ լետ. էր բերում, նա պինդ բռնած էր Եանկէլի մշջքից, իսկ Եանկէլը ձեռին բռնած ունէր մի շատ մեծ, սաւանի մէջ փաթաթած կապոց, և երկուսն էլ վիճում են օդի մէջ ու ալնպէս վրալ տալիս, հէնց իմանաս տասը ջհուդ մի զեղցու վրալ բազարում զալմաղալ սարքելիս լինէին....

Սատանան գիւլլի նսման վէր ընկաւ ամբարտակի վրալ. Թէ որ փափուկ կապոցը չլինէր, ով գիտի Եանկէլի ոսկորները փշուր-փշուր լինէին, Յնտոլ երկուսն էլ վեր թռան, ոտք ելան և սկսան դարձեալ զալմաղալը ձգել.

—Վա՛ վակ!.. Սա Բնչ խողութիւն է ձեր սրածը,—կանչեց Եանկէլը,—կարող չՔք մի փոքր զգուշութեամբ ցած գալ... Կարծեմ որ ձեռներիդը սաղ մարդ է:

—Մէկ մարդ, հլա մի հատ էլ կապոց. գետինը մտնէիք երկուսդ էլ...

—Հըմ. ձեզ Բնչ է խանգարում իմ կապոցիկս. Հօ դուք չէք պահողը, լինքս եմ...,

—Կապոցիկ, իրեղէնների մի սար է. Հազիւ քաշ տուի, օ օֆ, Պալմաններիս մէջ ալդ հո չկար....

—Վահն, ալդ որտնդ էք տեսել, որ մարդ առանց իրեղէնների ճամբալ ընկնի.... Որ լանձն էք առել մարդ տանել, պէտք է նրա իրերն էլ տանէք, ալդ առանց պալմանի էլ հասկանալի է.... Ով է դժուել իւր ապրանքը դէն գցի, նա-

շատոնց տեսնում եմ, որ ուզում էք խեղճ Եանկէլին խռըել, դրա համար էլ պատճառներ էք վնտրում...»

— Հա, քեզ նման աղուէսին խարողը երեք օր անգամ կեանք չի ունենալ Անիծուած լինի ալն օրը. որ քեզ պատահեցի:

— Իսկ ես կարծում էք շատ ուրախ եմ, որ ծանօթացել եմ ձեղու... Պահ-պահ, մի երեսելի զատ էք, էլի... Աւելի լաւ է դուք ինձ մի ասէք, թէ Բնչ էր մեր պալմանը. Հը՛, գուցէ դուք մոռացել էք, ու ուրեմն ես լիշեցնեմ—մենք դրազ էինք եկել. Գուցէ կասէք-դրազ էլ եկած չենք. Այդ հո երեսելի բան կլինէր.

— Ո՞վ է ասում դրազ չենք եկել. Մէթէ ես ասել եմ, թէ չենք եկել.

— Ե՞ն, ինչպէս կարող էք ասել դրազ եկած չենք, քանի որ ահա ալստեղ, հէնց ալս տեղում գրազ եկանք. Գուցէ չէք լիշում ինչի վրալ էր մեր դրազը, ևս ալս բոպէիս կլիշեցնեմ. Դուք ասում էիք—ջնուդները վաշխ են առնում, ջնուդները մարդկանց հարրացնում են, ջնուդները ջնուդներին խղճում են, իսկ օտարներին չեն խղճում, դրա համար է, որ ամենքն էլ ասում են, թէ զրողը տանէ դրանց. Գուցէ դուք ալդ բանը չէք ասել, իսկ ես էլ դուցէ դրան չեմ պատասխանել, թէ — ալ, ալստեղ թփերի քամակին կանդնած է ջաղացպանը. Թէ որ նա ջնուզի խղճակիս լինէր, ալն ժամանակ կկանչէր ձեղ. «Պարոն սատանալ, բաց թողէք — դա կին, դաւակներ ունիու, թալց նա չի կանչիլ...» Այս մէկ.

ավալ անպիտան, ինչպէս հասկացել է՝ — մտածեց ջաղացպանը, իսկ սատանան պատասխանեց.

— Լաւ, մէկ.

— Եետու, ասացի, լիշեցէք խօսքերս—հէնց որ ալստեղց սոս կտրուի, ջաղացպանը օղետուն կրանալ և կսկսի օղիկ մէջ ջուր խառնել, իսկ վաշխ—նա հէնց ալժմ էլ շատ լաւ է կրփում...» Երկու.

— Լաւ, երկու,— հաստատեց սատանան, իսկ ջաղացպանը դլուխը քորեց.

«Ալդ ու տեղից կարող էր զուշակել անիծեալը».

— Յետու ասում եմ—ուրիշներն ուզում են, որ մեզ գըողը տանէ, ալդ ձմարիտ է.... Բայց Բնչ էք կարծում, թէ որ ալն ժամանակն ալստեղ լինէին մեր ջնուդներն ու իմանալին,

թէ ինչ էիր ուզում ինձ անել, զալմաղալ կրաքրացնէին թէ չէ: Իսկ ջաղացպանի համար, մի տարուց, նրա հաւատակիցներից ունի ուզում էք հարցրէք, ամենքն էլ պիտի ասեն—գրողը տանէ նրան...: Երբք:

— Լաւ, երեք! Ո՞վ է բան ասում:

— Շատ հետաքրքիր կլինէր, որ այդ էլ ուրանալիք: Ել ինչ ջնուղի աղնիւ սատանաւ պիտի լինէիք: Բայց գուք այն ասացէք—բնչ էր մեր պալմանը,

— Ես ամեն բան կատարեցի: Մի տարի քեզ կենդանի թողի—մէկ: Ենտ քերի—երկու....

— Իսկ երբորդը՝ Ո՞քն է երբորդը.

— Ուրիշ էլ ինչ ես ուզում: Որ գրազը տանես — բաց կթողնեմ, կզնաս բանիդ:

— Հապա վնասներս...: Կրած վնասներս չպիտի տաք....

— Վնասն Ո՞րտեղից կարող էիր վնաս ունենալ, քանի որ մի ամբողջ տարի քեզ առանց վկալականի թոլ տուփնք մեր մէջ առուտուր անելու.... Հը: Դու աշխարքում երեք տարում կարող չէիր ալսքան օգուտ ստանալ.... Ինքդ նալիր —ես ալստեղից քեզ միան կապալով տարալ, մինչն անգամ սոտիդ կօշիկ չունէիր, բայց ազմ տես, ինչպիսի կապոց ես բերել, հը: Թէ վնաս ես ունեցել, բաս ալդ որտեղից է:

— Ու վար, Եմ կապոցն էք երեսովս տալիս.... Ինչ որ այնտեղ առուտուրով աշխատել եմ—ալդ իմ բաղզս է.... Միթէ դուք իմ շահ հաշուել էք: Ձեզ ուղիղն ասեմ, որ ակնտեղ ձեր մէջ առուտուր անելուց, ես վնասից զատ շահ չեմ տեսել, իսկ ալստեղ էլ սաղ տարիս եմ կորցրել....

— Ա՛յ դու խարերալ,—կանչեց սատանան,

— Ե՞ս եմ խարեբան: Դուք էք խարերալ, ցած, անպիտան, վատ....

Աւ մկան դարձեալ այնպէս շուտ շուտ վրաէ տալ, որ ոչ մի խօսք կարելի չէր հասկանալ Երկուսն էլ ձեռներն էին շարժում, երկուսն էլ թասակները թափ տալիս ու ոտքի մատների վրաէ բարձրանում, հէնց գիտենաս կուոկի պատրաստ երկու աքլար լինէին: Վերջապէս առաջինը սատանան ուշքի եկաւ:

— Դեռ լալտնի էլ չէ, թէ ով է տարել: Որ ջաղացպանը քեզ չխղճաց, այդ ուղիղ է, իսկ մնացածը դեռ կտեսնենք, դեռ պէտք է ուրիշներին հարցնել, գուցէ նա օղետուն էլ բացած չլինի:

«Երկուսն եմ բաց արել, —դարձեալ զլուխը քորեց ջաղացաննը: —Ե՛ս, դո՞նէ պէտք է մի տարի սպասած լինէի, —այն ժամանակ Նանկէլը հաստատ տանում կտար գրազը, թէ չէ ալժմ շատ վատ հոտ է դալիս...»:

Եւ նա իւր ջաղացի կողմը նալեցաւ — արդեօք կարելի չէր, կամացով, ջաղացի քամակով փախչել, գիւղ գնալ: Բայց ալդ միջոցին անտառում մէկի փնթիվնթոցն ու անհաւասար քալլուածքը լսեց: Նանկէլը ուսեց իւր կապոցն ու վաղեց, ուսիրի ետեր գնաց: Ջաղացպանը հաղիւ կարողացաւ մի հաստ ուռենու ետև թագ կենալ, որ երկուսն էլ —սատանանու ջուղը—ուռուտ մտան, իսկ ալդ միջոցին ամբարտակի ծալրին երենեցաւ բանուոր Գաւրիլօն: Նրա հագուստը պատառոտած էր, գլխարկը մի կողմի վրալ թեք ընկել, իսկ բորբիկ ոտներն իրար հետ վիճում էին — մէկն ուզում էր աջ գնալ, իսկ միւսը հակառակի պէս, ձախ էր գնում: Մէկը դարձեալ ուզում է իւր կողմը ձգի, բայց միւսը դէպի իրեն էր քաշում, այնպէս որ կարծեն հէնց ախ է խեղճի գլուխը մի կողմէ ընկնելու: իսկ մարմինն ու ոտքերը—միւս կողմ: Ալսպէս խեղճ տղան զանազան գծեր կաղմելով գնում էր գնում, բայց էլի ամբարտակի ծալը չէր համուռ:

Սատանան տեսաւ, որ բանուորը քոռ հարբած է, դուրս եկաւ ու իւր իսկական կերպարանքով կանգ առաւ ամբարտակի մէջ տեղը: Յալտնի բան է, ինչ ունէր սատանան հարբած մարդու հետ շատ նաղ ու տուղ անելու:

—Բարի աջողում, —ասում է: —Որտեղէք ալսպէս կոնծիլ...:

Ջաղացպանը միայն ալժմս նկատեց, թէ ինչպէս ալսմէկ տարուաց մէջ Գաւրիլօն ընկել էր և զզզուել: Եւ ալդ ախ պատճառով միայն, որ իւր տիրոջ մօտ աշխատածը հէնց նրա մօտ էլ խումի էր տալիս. վազուց է ջաղացպանից փողի երես չէր տեսել, հապա փողի տեղ միայն օղի էր վերցնում: Բանուորը բոլորովին մօտ եկաւ սատանալին, երկու ոտքը դէմ տուեց գետնին ու ասաց:

—Հօ.հօ, կանգնի: Այս ինչ թարս ոտնելը են, ախքէր: Երբ որ հարկաւոր է, չեն գնում, իսկ երբ տեսնում են, որ մի բանի դէմ ես առել, զօրով ուզում են առաջ տանեն: Իսկ զու ով ես, ինչ ես, որ ասես չմ ջոկում...

—Ես, եթէ բարեհածիք տեսնել, սատանակ եմ...:

—Համագ հո չմս անում: Հը... կարելի է ճիշդ էլ

զինի։ Ահա պողերը, պոչը—ամեն բան իրա տեղն է, Բաս գա-
ւիկններդ ինչացու են։

—Ես, սրտներդ չցաւի, ջնողի սատանալ եմ։

—Ի՞ի... Ա՛ քեզ քան։ Որ պատմելու լինիմ, թէ ձեր
մեծապատռութեան իմ աչքովս ևմ տեսել, ոչ ոք չպիսի հա-
ւատալ... Անցեալ տարի նո դու չթիր Յանկէլին չանչեր։

—Հենց ես էի։

—Հիմի ումն ես եկել տանելու։ Ջլինի ինձ։ Զեռք չը-
տաս, թէ չէ կդուամ, Աստուած վկալ կդուամ... Դու դեռ
չես իմանում, թէ ինչ ձան ունիմ։

—Է՛ն, ի զոր մի կանչիլ, ալ մարդ։ Դու իմ ինչիս ես
պէտք...։

—Դուցէ ջաղացպանին եմ տանելու։ Թէ ուղում ես՝ կան-
չեմ գալ Բալց չէ։ Նրան էլ որ տարար լետով ովէ օղետուն
պահելու։

—Միթէ նա օղետուն ունի։

—Նա... Զէ թէ մէկ, երկուան ունի—մէկը զեղամիջում,
միւսը ճանապարհի վրալու...։

—Նա հա-հա...։ Ջլինի զրա համար է ջաղացպանն ափ-
սոսդ զալիս։

—Օ՛ն, ալդ ինչ զուբալ ծիծաղ ունիս...։ Հըմ, նս այն
մարդը չեմ, որ նրան ափսոսամ...։ Չէ, ալդ չէր ասելիքս...։
Ուղում էի ասել—նա այն մարդը չէ, որ ես նրան ափսոսամ.
Նա կարծում է, թէ Գաւրիլոն ախմախ է...։ Բալց չէ, չէ,
նրա արածն ուղիղ է—ես մի ալնքան էլ խելօք մարդ եմ,
ներող կինիք։ Բալց էլի փլաւ ուտելիս զգալը ուրիշի բերա-
նը չեմ տանիլ։ Հապա միան իմ բերանս, թէ ուղեմ պսա-
կուել, ինձ համար կստակուեմ, իսկ եթէ չեմ պսակուիլ, դար-
ձեալ ինձ համար է։ Ուղիղ եմ ասում թէ ոչ։

—Ուղիղը ուզիղ է, բալց չեմ հասկանում, թէ ինչ ես
ուղում ասել։

—Հը, զուցէ քեզ հարկաւոր չէ գիտենալ, զրա համար
էլ չես հասկանում, բալց որովհետև ինձ պէտք է հասկանալ,
զրա համար էլ հասկանում եմ, թէ ինչու է ուղում նա ինձ
պսակել։ Է՛ն, թէպէտ շտա էլ խելօք լինիմ, էլի շտա լաւ եմ
հասկանում նրա միտքը։ Աչ հէնց այն ժամանակն էլ որ դուք
Յանկէլին տարաք, ես խղճացի նրան։ Աջմի ով պէտք է մեզ
համար օղետուն պահէց, հարցրի աղիս։ Իսկ նա պատասխան

Հ տալիս, սթիւհ, լիմար, Միթէ մարդ չկալ, Հենց ասենք եսու,
Ազգակն էլ ալժմու—որ ջաղացպանին տանէք, առանց ան չէ,
որ նրա տեղը բռնող չգտնուի... Դէ, քեզ պէտք է ասեմ, ալ
մարդ... թիւհ, թիւհ, ներեցէք, Անիծուած սատանին մարդ
ասացի... Քեզ պէտք է ալս ասեմ—չզիտեմ ինչն, կարծես
քռւնս է տանում, Դու զիտես, ինչ ուզում ես արա.. կուզես
վեր առ տար, իսկ ես գնամ, քնեմ, զիտես, մի քիչ հիւանդ
եմ և աւ ալդ է.. Ըհը!...

Եւ բանուորի ոտքերը դարձեալ սկսան իրար խառնուել,
ու հաղիւ էր զուուը բացել, ներս մտել, որ վեր լնկաւ ու
սկսաւ խռմիացնել

Սատանան ուրախ-ուրախ ծիծաղեցաւ ու ամրարտակի
ծառին կանդնած՝ Յանկէլին աչքով արաւ.

—Կարծես թէ ասածդ ուղիղ լինի, Յանկէլ, Ասածիդ
նման է զուրս զալիս... Բայց արի ինձ մի ձնոք շոր տուր,
